ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1988-1991թթ.)[24]

Աննա Մկրտիչյան

Բանալի բառեր՝ տեղեկատվություն, տեղեկատվական անվտանգություն, տեղեկատվական միջավայր, վստահության ճգնաժամ, հայաստանյան մամուլ, ղարաբաղյան շարժում, հասարակական կարծիք, խորհրդային ապատեղեկատվություն:

Հասարակության առանցքային բնութագրերից մեկը տեղեկատվության փոխանակումն է նրա առանձին տարրերի միջև՝ դրանց գործունեության ապահովման նպատակով: Տեղեկատվության ձեռքբերման և տարածման միջոցները, արդյունքում ձևավորվող կապերը կազմում են հասարակության տեղեկատվական-հաղորդակցական համակարգը: Եվ որպեսզի այդ համակարգը գործի լիարժեք և ամբողջական, անհրաժեշտություն է առաջանում տեղեկատվության տարածումը դարձնել անխափան, մասնագիտական առումով՝ նաև օպերատիվ: Ասվածն առավել կարևորություն է ստանում հատկապես պետության համար անկայուն իրավիճակում, հատկապես՝ պատերազմական: Ի վերջո, տեղեկատվության տարածումը հանգեցնում է նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտների՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, վերակազմակերպմանը: Այդ առումով ղարաբաղյան շարժումը, հետո նաև հայ-ադրբեջանական հակամարտությունն ու ղարաբաղյան պատերազմը մասնագիտական լուրջ մարտահրավերների առաջ կանգնեցրին հայաստանյան տեղեկատվական միջավայրը՝ մամուլն ու ՁԼՄ ներկայացուցիչներին: Խնդիրներն անխուսափելի էին, ընդ որում թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական առումներով, որոնց լուծմամբ էին պայմանավորված տեղեկատվության տարածման, ապա նաև՝ ներազդման հնարավորությունները:

Տեղեկատվության ձեռքբերման, առավել ևս տարածման ազատությունը խիստ սահմանափակված էր՝ պայմանավորված ծանր ու դժվար ժամանակաշրջանով: Դեռ բավական մեծ էին տեղեկատվության վերահսկելիության հնարավորությունները, քանի որ քաղաքական իշխանությունը տեղեկատվական ոլորտում տիրապետում էր բացառիկ իրավունքների: Նպատակը կանխել հասարակության հիմնարար արժեքների համար վնասակար տեղեկատվության տարածման, հասարակական գիտակցության մանիպուլյացիաների վտանգը և միջոցներ ձեռնարկել տեղեկատվական տարածությունից եկող ռիսկերի (ներքին և արտաքին) դիմագրավման համար: Մի կողմից առաջ էր գալիս տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիր, որն անհրաժեշտ էր տեղեկատվական հասարակությունում գործունեություն ծավալող ցանկացած սուբյեկտի (լինի դա պետություն, կազմակերպություն, թե անհատ) կենսագործունեության համար, մյուս կողմից պատերազմական իրավիճակում ապրող հասարակությունը սպասում էր տեղեկատվության՝ օպերատիվ, օբյեկտիվ, բազմակողմանի:

Պատերազմական իրավիճակում տեղեկատվության ձեռքբերման և տարածման հարցում չափազանց մեծ կարևորություն է ստանում տեղեկատվական անվտանգության դերը: Իսկ տեղեկատվական անվտանգություն հասկացության պարզաբանման համար անհրաժեշտ է դիտարկել «տեղեկատվություն» և «անվտանգություն» հասկացությունները:

---

[24] Հոդվածն ընդունվել է 24.02.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.թ., դոցենտ, Ն.Մարտիրոսյանը:

«Տեղեկատվություն» (ինֆորմացիա) հասկացությունը (լատ. informatio, informare-միտքը ձևակերպել, կարգավորել, սովորեցնել) օգտագործվում է տարբեր իմաստներով: Ընդհանուր առմամբ այն տվյալների ամբողջություն է շրջակա միջավայրի, անձանց, իրադարձությունների, փաստերի մասին, որը փոխանցվում է մարդու և բնության, մարդկանց, մատերիայի փոխազդեցության միջոցով: Ըստ ամերիկյան հայտնի մաթեմատիկոս և փիլիսոփա Նորբերտ Վիների՝ «տեղեկատվությունը նշանակում է այն բովանդակությունը, որը ստացվում է արտաքին աշխարհից մեր և մեր զգայարանների հարմարվողականության արդյունքում» [1]:

Տեղեկատվական անվտանգության պարզաբանման համար կարևորվում է ոչ միայն տեղեկատվություն հասկացության, այլև «ապատեղեկատվության» մեկնաբանությունը: Ապատեղեկատվությանը բնորոշ են տեղեկատվության բոլոր հատկանիշները՝ բացառությամբ իմաստի, էության: Ապատեղեկատվությունը պարունակում է կեղծ և աղավաղված տվյալներ առարկաների և երևույթների մասին: Դրա տարածումը և ստացումը ստեղծում է աղավաղված պատկերացում իրերի և երևույթների, նրանց որակական և քանակական բնութագրիչների մասին՝ հանգեցնելով մոլորության և սխալ որոշումների կայացման[2]:

«Անվտանգություն» հասկացությունը մեկնաբանվում է որպես անհատի, հասարակության, պետության, կազմակերպության, ձեռնարկության կենսական շահերի պաշտպանվածություն հնարավոր կամ գոյություն ունեցող սպառնալիքներից կամ այդպիսի սպառնալիքների բացակայությունը: Ըստ էության անվտանգությունը համապատասխան օբյեկտի այնպիսի վիճակն է, երբ բացակայում են տվյալ օբյեկտին ուղղված սպառնալիքները կամ դրանք չեզոքացվել են նպատակաուղղված գործունեության միջոցով: Ինչպես նշում է տեղեկատվական անվտանգության և ինֆորմատիկայի մասնագետ Բրյուս Շայները, անվտանգությունը արդյունք չէ, այլ գործընթաց[3]:

Տեղեկատվական ոլորտը, ի տարբերություն հասարակական կյանքի այլ ոլորտների, բնութագրվում է ազդեցությունների ինտենսիվությամբ և դինամիկությամբ, արագ կատարվող փոփոխություններով, ինչը պահանջում է տեղեկատվական տարածությունում գործունեություն ծավալող սուբյեկտների հարմարվողական հնարավորությունների բարձրացում և ձևավորվող նոր պայմաններին հարմարվելու կարողություն:

Տեղեկատվական անվտանգությունը տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության ապահովման գործընթացն է: Տեղեկատվական անվտանգությունը կազմում է պետական անվտանգության բաղկացուցիչ մասը և հանդես է գալիս որպես հասարակության համալիր անվտանգության ապահովման անհրաժեշտ տարր: Սակայն այս հասկացությունը, կախված օգտագործման ոլորտից և ընդգրկված հարցերի շրջանակից, ինչպես նաև ցուցաբերվող մեթոդոլոգիական մոտեցումներից դեռևս չունի հստակ մեկնաբանություններ: «ՀՀ տեղեկատվական անվտանգությունը հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ»: Իսկ տեղեկատվական ոլորտը բնութագրվում է որպես «տեղեկատվություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական ենթահամակարգերի ամբողջություն, ինչպես նաև այդ գործընթացների ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգ»[4]: Փաստորեն շեշտը դրվում է պետության, հասարակության և քաղաքացիների շահերի համակցված պաշտպանության վրա:

Ղարաբաղյան շարժման տարիներին տեղի էին ունենում պատմական փոփոխություններ, առաջանում էր անորոշության և անկայունության վիճակ, որի պայմաններում անվտանգության ավանդական համակարգերը այլևս արդյունավետ չէին: Ստեղծվում էին բոլորովին նոր պայմաններ տեղեկատվական անվտանգության որակական փոփոխությունների համար:

1988-1991թթ. հայաստանյան մամուլի հրապարակումների ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել այն բազմաթիվ մտահոգությունները, որոնք առկա էին տեղեկատվական միջավայրում և հենց մամուլի գործունեության մեջ: Դրանցից ամենաակնառուներն էին՝

- *Մամուլի հիասթափեցնող գործունեությամբ պայմանավորված մամուլի հանդեպ վստահության ճգնաժամ,*
- *Մամուլի գործունեության խոչընդոտները՝ լրագրային թղթի պաշարների սպառումից մինչև տպագրական խնդիրներ ու պարբերականներն ընթերցողներին հասցնելու դժվարություններ,*
- *Հասարակական կարծիքի ձևավորում՝ ոչ ամբողջական լրատվության ազդեցության պայմաններում,*
- *Խորհրդային ապատեղեկատվության տարածումից մինչև ազատ մամուլի ստեղծման դժվարություններ:*

Ոչ ամբողջական տեղեկատվություն հաղորդող, հաճախ նաև լռություն պահպանող մամուլը ղարաբաղյան շարժման սկզբնական շրջանում չէր իրականացնում իրեն վերապահված գործառույթները՝ այդ կերպ ձևավորելով վստահության ճգնաժամի մթնոլորտ: Մամուլի հիասթափեցնող գործունեությանը ժամանակի ընթացքում գումարվում էին նաև տպագրական բազմաթիվ խնդիրները, տարածման դժվարությունները:

Ազգային ինքնության գիտակցումով ոտքի ելած ժողովուրդը իր հասարակական-քաղաքական զգուշավոր կեցվածքում հեղափոխական քայլեր էր անում, միաժամանակ փորձելով արմատական բարեփոխումներ կատարել կենսագործունեության գրեթե բոլոր ասպարեզներում: Դրանց շարքում, սակայն, մամուլը թերևս ամենապասիվ դերում էր, որն արձագանքում էր հայոց պատմական հայրենիքում՝ Արցախում կատարվող իրադարձություններին բացառապես հաղորդագրությունների տեսքով: 1988-ի փետրվարին տեղի ունեցած բազմահազարանոց ցույցերը պատկերող լուսանկար մեր ուսումնասիրությունների ընթացքում այդպես էլ չգտանք խորհրդահայ մամուլի այդ օրերի էջերում: Դեպքերի բուռն զարգացումների համատեքստում այդ օրերի հայրենական մամուլի կրավորական դիրքն ու լռությունը զարմանք էր պատճառում նույնիսկ մոսկովյան մամուլին. «Եթե փետրվար և մարտ ամիսների թերթերին նայենք, կարելի է եզրակացնել, որ ամենից խաղաղ ժամանակը փետրվարի վերջն էր… Ավելին՝… հայկական մամուլը հետ է մնում, նույնիսկ ավելի, քան վերակառուցումից առաջ: Սուր և համարձակ հոդվածները քիչ են, պատճառները՝ … շատ» [5], չնայած եղել են դեպքեր, երբ «թղթակիցները եկել են հրաժեշտ տալու. «Գնում ենք, ավելի լավ է ոչինչ չգրենք, այդպես ավելի ազնիվ կլինի»[6]:

Մամուլի ճգնաժամային վիճակը բացահայտ քննադատում էր «Անկախություն»-ը՝ ընդգծելով, որ «Խորհրդային Հայաստանի լրատվական միջոցները տնօրինում է Կրեմլը: Ոչ մի լուր ու հոդված… չի տպագրվում կամ հաղորդվում առանց Կրեմլի համապատասխան պաշտոնյաների թույլտվության: Լրատվամիջոցների համար արգելված են ՏԱՍՍ-ի որոշ հաղորդագրությունները կամ այդ հաղորդագրությունների որոշ հատվածները»[7]: Ասվածին իբրև ապացույց՝ «Անկախություն»-ը գրեց, թե ինչպես էր

խորհրդային քարոզչությունը բողոքի ալիքը հանդարտեցնելու նպատակով դիմում տարբեր հնարքների: Մարտի 6-ին Մոսկվայից ստացվել էր ՏԱՍՍ-ի հաղորդումը, որը զարմանք է պատճառել իր բարյացակամ երանգով: Լրատվական գործակալության թղթակիցը, մեկնաբանելով Ղարաբաղում և Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, նշել էր, որ այդ պայքարն արդարացի է, և ժամանակն է շտկել Ստալինի սխալները: Լուրը տարածվել էր մայրաքաղաքում, բայց խաբեությունն արագ բացահայտվեց: Բանն այն էր, որ հեռագիրը ստացվել էր խիստ հրահանգով՝ «Միմիայն Սփյուռքի համար»[8]: Ի դեպ՝ նման մի հետաքրքրական խոստովանություն արել էր նաև «Սովետական Ղարաբաղ»-ը[9], ըստ որի՝ «թերթի 44-ից 46-րդ համարները տպագրվել են ոչ թե Ստեփանակերտում, այլ Բաքվում»[10]:

Այդ ժամանակաշրջանում, առավել քան երբևէ ընթերցողները սպասում էին տեղեկատվության ու հետևում էին մամուլի հրապարակումներին՝ միաժամանակ գիտակցելով, որ թերթերը դարձել էին ապատեղեկատվություն տարածող ու իրականության շինծու պատկեր ստեղծող օրգաններ: Պատահական չէ, որ «մարտի 20-ին մոտ երեք հազար ցուցարարներ, հանրապետությունում լույս տեսնող լրագրերը ձեռքներին, հավաքվեցին Մամուլի տան մոտ և ի նշան բողոքի՝ լրագրերը թափեցին գետնին և վանկարկեցին՝ ամոթ: Հետո բոլորը շարժվեցին դեպի Ռադիոտուն, որտեղ կայացավ հանրաժողով: Բողոքի այդ ցույցն ուղղված էր Հայաստանի ու ՍՍՀՄ մամուլի ու հեռուստատեսության դեմ, որոնք ոչ մի ճշգրիտ տեղեկություն չեն հաղորդում... Ոչ մի լուր չեն տալիս մեկ ամսից ավելի հայության կյանքը փոթորկող իրադարձությունների մասին»[11]:

ԼՂԻՄ-ից, Հայաստանից և Ադրբեջանից տեղեկություններ հաղորդող կենտրոնական և հանրապետական թերթերի թղթակիցները հաճախ էին լսում ընթերցողների դժգոհությունները, թե «Մամուլին չենք հավատում, դուք ճշմարտությունը չեք գրում»[12]: Պատահական չէ, որ ընթերցողներն իրենց ցասումը խորհրդային զանգվածային լրատվամիջոցների հակահայկականության դեմ ժամանակ առ ժամանակ արտահայտում էին բողոքի տարբեր միջոցառումներով, որի ընթացքում հնչում էին իրենց մտահոգությունները մամուլի լրատվական քաղաքականության վերաբերյալ. «Օպերայի հիմնական մուտքի վերնամասում հայտնվեց այծի մի մեծ գծանկար, այծը «Մաա~-մալ» էր մայում»[13] կամ «...Միությունում հարյուր հազարավոր թերթեր ու ամսագրեր են լույս տեսնում. կարելի է, օրինակի համար, միայն «Պրավդա»-ն լույս ընծայել, իսկ մյուս թերեթերն էլ գրեն՝ «տե՛ս «Պրավդան»[14] կամ «հեռուստատեսությունը և նաև մյուս լրատվամիջոցները Արցախի մասին չեն ուզում խոսել»[15] կամ «...Մի բան ենք տեսնում մեր աչքով, նույն օրը Մոսկվայից հեռուստատեսությամբ լրիվ այլ բան ենք լսում և տեսնում...»[16]:

Լրատվամիջոցների և լրագրողների անկատար աշխատանքի մասին խոսեց նաև Հայաստանի Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Ս. Հարությունյանը՝ նշելով, որ «ժամանակը մեզ վրա դնում է պատմական պատասխանատվություն, և վերջին ամիսների իրադարձությունները ի հայտ բերեցին մի շարք լուրջ թերություններ նաև մասսայական ինֆորմացիայի աշխատանքում, ցույց տվեցին անսովոր պայմաններում նրանց անպատրաստությունը...»[17]:

Անսալով իրենց ընթերցողների ձայնին, ովքեր ասում էին, թե «Թերթերը գրեթե ոչինչ ճիշտ ու ժամանակին չեն գրում», «Հոգնել ենք՝ պատուհանից տեսնում ենք ցուցարարների բազմահազարանոց շարքերը, իսկ թերթերից պարզվում է, որ պետք չէ աչքերին հավատալ, ամեն ինչ հանգիստ է ու խաղաղ»[18], մամուլը ժամանակի ընթացքում փորձում էր վերանայել իր լրատվական քաղաքականությունը՝ տպագրելով

լուրեր ու լուսանկարներ Մատենադարանի հարթակից և Ստեփանակերտի հրապարակից[19]:

Մամուլը գիտակցում էր իր չիրագործած պարտավորությունը և խոստովանում, որ «Մեր հասարակության մասին ի՞նչ կասի գալիք ժամանակների պատմաբանը, երբ պրպտումներ կատարելով 1988-ի թերթերի կույտերի մեջ, զարմանքով հայտնաբերի, որ Սումգայիթում տեղի ունեցածի առթիվ ցավակցության ու վրդովմունքի նամակներ կարելի է միայն անձնական արխիվներում գտնել: Ի՞նչ կասի այդ պատմաբանը, երբ իմանա, որ Սումգայիթից փախած հայերը, իրենք աղքատ դարձած, փող են փոխանցել Արզամասի երկաթուղային աղետը վերապրած մարդկանց համար, բայց որևէ մեկ թերթում զուր կփնտրի սումգայիթցիների օգնության ֆոնդի մասին հիշատակում»[20]: Ստեղծված մտահոգիչ վիճակի մասին հայաստանյան մամուլը գրում էր. «Մամուլը ոչ թե թաքցնում էր, այլ կեղծ լույսով էր ներկայացնում: Նա ոչինչ չէր ասում տեղական իշխանության թողտվության, երբեմն էլ հրահրիչ դիրքորոշման մասին: Նա Սումգայիթը Սումգայիթ չանվանեց: Բռնությունն ու սպանությունը երկչոտությամբ անվանում էին խուլիգանական գործողություններ: Եթե իրերը սկզբից իրենց անունով կոչվեին, ապա հնարավոր է, որ իրադարձություններն այդչափ ողբեգական բնույթ չստանային»[21]: Միութենական և կենտրոնական մամուլի՝ ԼԴ-ի հիմնախնդրի խեղաթյուրված ու սխալ լուսաբանումը և մեկնաբանումը մտահոգում էր նաև ԵՊՀ-ի բազմահազարանոց կոլեկտիվին, պետք էր «վերջ տալ մամուլի այդ հակասական ելույթներին»[22]: Ի դեպ, Սպիտակի երկրաշարժից ընդամենը մի քանի օր անց (դեկտեմբերի 13) ԽՄ Նախարարների խորհուրդը քննարկեց գրաքննությունը խստացնելու հարցը ու որոշում ընդունեց «խստագույնս գրաքննության ենթարկել մամուլով ու եթերով հրապարակվող բոլոր նյութերը, իսկ այն դեպքում, երբ անհնար է գրաքննության ներկայացնել, համապատասխան հրատարակությունը դադարեցնել»[23]:

Մամուլի հիասթափեցնող գործունեությանը գումարվում էին նաև այն խոչընդոտները, որոնք դժվարացնում էին թերթերի տպագրությունն ու տարածումը: Հայաստանի շրջափակման պատճառով (խոսքը Ադրբեջանի կողմից ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղիների շրջափակման մասին է) ու տնտեսական ծանր իրավիճակից ելնելով՝ լիովին սպառվեցին պահեստավորված լրագրային թղթի պաշարները, որի պատճառով լույս չէին տեսնում որոշ թերթեր կամ էլ տպագրվում էին անկանոն: Բացի այդ՝ «բենզին չլինելու պատճառով մամուլը և փոստային առաքումները տեղ չէին հասնում»[24]: Տեղական մամուլը տպագրվում էր գրքի համար նախատեսված թղթի վրա[25]: Այսպես. «Խորհրդային Հայաստան»-ը սկսեց լույս տեսնելու շաբաթը ոչ թե 6, այլ 5 անգամ, «Երեկոյան Երևան»-ը՝ 3, «Ավանգարդը» և ևս մի քանի թերթ՝ 1-ական անգամ[26]: Կրճատվեց թերթերի լույս ընծայման պարբերականությունը, բայց չնվազեց իշխանությունների կողմից թերթերի հանդեպ կիրառվող ճնշումը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրի տեղակալին հոդվածի համար 30 օրով կալանավորեցին, հայտնի չէր գտնվելու վայրը, բողոքի ձայնին միացավ «Երեկոյան Երևան»-ը [27]: Որ «Խորհրդային Ղարաբաղ»-ը հալածանքների էր ենթարկվում, թերթը գրում էր շարունակաբար՝ սատարելով խմբագիր Մ. Հովհաննիսյանին[28]:

Ըստ էության՝ արցախահայությունը ծանր օրեր էր ապրում, բայց միաժամանակ շարժումը մեծ թափով զարգանում էր, զուգահեռաբար ճաքեր էր տալիս Խորհրդային կայսրությունը, բնականաբար նաև ճանապարհ բացելով մամուլի նոր անունների համար:

1990-ի գարնանը սկսվեց մամուլի վերածննդի նոր փուլ, որի բնորոշ հատկանիշն այն էր, որ սկսեց փոխվել պաշտոնական մամուլի դեմքը: Գործընթացը երկու ուղղվա-

ծություն ունեցավ՝ արմատական և վերանորոգչական: Արմատական գործընթացի արդյունքում սկսեցին երևան գալ նոր տիպի պաշտոնական պարբերականներ՝ «Գործը», «Անդրադարձը», «Մունետիկը»[29], «Ուրբաթը», «Ազատ գոտին»: Վերանորոգչականի նպատակն էր, դեմոկրատական հանդերձանք հագցնելով, փրկել հին (այստեղ կարդալ հնացած) մամուլը: Այսպես «Կոմսոմոլեցը» դարձավ «Էպոխա», «Կոմունիստը»՝ «Գոլոս Արմենիի», «Խորհրդային Հայաստանը»՝ «Հայաստան»…: Մամուլի ինքնամաքրման այս գործընթացը սպասելի մի հետևանքի բերեց. ընթերցողը ընտրություն կատարելու հնարավորություն ստացավ… Սկսվեց պայքար ընթերցողի համար: Մամուլը ծնունդ էր առնում նաև շրջաններում[30]:

Աշխատանքային խնդիրների՝ արգելքների և սահմանափակումների մասին բացահայտ խոսեցին հայաստանյան պարբերականների խմբագիրները՝ նշելով, որ «Արգելքները շատ էին և դեռ կան»[31]: «Ոգնի»-ն վերջին ինը տարվա ընթացքում ինը նկատողություն էր ստացել, «Ճշմարտությունը ժամանակից շուտ ասելու համար», իսկ ըստ «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագրի՝ վերջին շրջանում մամուլն ըստ էության գտնվում էր թույլատրված ազատության մեջ, «տխրախոչակ գլավլիտն էլ չի գործում»: Որ արգելքները նկատելիորեն նվազել էին, խոստովանեցին նաև «Ավանգարդ» և «Երեկոյան Երևան»[32] թերթերի գլխավոր խմբագիրները:

Մամուլը մեծ հույսեր էր կապում նաև այդ օրերին (օգոստոսի 1, 1990թ.) ուժի մեջ մտած «Մամուլի և մասսայական ինֆորմացիայի ուրիշ միջոցների մասին» օրենքի հետ, որի համար ըստ էության «Լրագրողները երկար պայքարեցին՝ ձգտելով հասնել խոսքի իսկական ազատության և արդարության: Արդյո՞ք նրանց հույսերն արդարացվում են»[33]: Կասկածամտության գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ 1980-ականների վերջին և նույնիսկ 1990-ականների սկզբին հոգեվարք ապրող խորհրդային գաղափարախոսությունը մամուլին ազատ, անկաշկանդ ու ժամանակին գրելու լիարժեք հնարավորություն չէր տալիս:

Ստեղծված իրավիճակում, ի թիվս այլ հարցերի որոշվեց «ապահովել մամուլի ազատությունը»[34], որն ամրագրվեց Հայկական ԽՍՀ ԳԽ-ն օգոստոսի 23-ին ընդունած Հայաստանի անկախության մասին հռչակագրում: Իր խարխլած դիրքերը վերջնականապես չկորցնելու համար ՀԿԿ-ն փորձեց ժամանակի պահանջներին հարմարվել: «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը դեռ 1990-ի սկզբին աստիճանաբար մոտեցավ տեղեկատվական ոլորտում ժողովրդական զանգվածների պահանջների բավարարումին («Խորհրդային Հայաստան» թերթը 1990թ. օգոստոսի 25-ից դարձավ «Հայաստան»՝ իբրև Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի պաշտոնաթերթ): Սկսեցին տպագրվել ԽՀ-ի հայտնի գիտնականների և մտավորականների հոդվածները՝ Արցախի պատմության, արցախահայության պահանջատիրության արդարացիության և ընդհանրապես Հայկական հարցի մասին: Հրապարակվեցին նաև Հայաստանի առաջին հանրապետության և ՀՅԴ պատմության մասին նյութեր, որոնք ամբողջ 70 տարի խստորեն արգելված էին: Թերթին աջակցեցին հրապարակախոսներ, մտավորականներ (Պ. Զեյթունցյան, Վ. Դավթյան, Ս. Սարգսյան, Հ. Սիմոնյան, Ս. Պողոսյան)՝ տպագրելով իրենց հոդվածաշարերը[35]:

Քաղաքական իրավիճակով և նոր խոսք ասելու անհրաժեշտությամբ էր թերևս պայմանավորված այն հանգամանքը, որ հայաստանյան մամուլի ընտանիքը շարունակ համալրվում էր նոր անուններով: Հոկտեմբերի 9-ից լույս տեսավ Հայաստանի ԳԽ հասարակական-քաղաքական երկլեզու օրաթերթը՝ «Հայաստանի Հանրապետությունը»: Առաջին համարը մեծ մասամբ նվիրված էր դարաբաղյան շարժմանը, նրա ակունքներին, փուլերին, ներկայացվեց իրադարձությունների ժամանակագրությու-

նը[36]: Հենց առաջին համարից էլ նկատելի էին բովանդակային ու արտաքին ձևավորման էական տարբերություններ, որոնք արտահայտվում էին նյութերի թեմատիկ և կառուցվածքային բազմազանությամբ, լուսանկարների առատությամբ, համապատասխան մակագրություններով: Այդուհանդերձ, մամուլի հանդեպ հասարակության վստահությունն անկում էր ապրում, ինչն արտահայտվում էր առաջին հերթին բաժանորդագրությունների («ՀՀ», «Ավանգարդ», «Գրական թերթ», «Կանչ») կտրուկ նվազմամբ[37]:

Սակայն 1990 թվականի մամուլի քննությունը փաստում է, որ չնայած ստեղծված դժվարությունների՝ Կոմկուսը այդ տարի հանդուրժեց ազատ, այլընտրանքային պարբերական մամուլի տպագրությունն իրենց տպարաններում: Ավելին՝ այդ ոչ պաշտոնական մամուլը հասարակությունը կազմակերպելու և ուղղորդելու հզոր զենք ձեռք բերեց: Հայտնվեցին մի քանի տասնյակ նոր անուններ, որոնք բոլոր ցուցանիշներով առաջ անցան Կոմկուսի տնօրինության տակ մնացած մամուլից: «Սոյուզպեչատ»-ի տվյալներով՝ «1990թ.-ի դրությամբ մեզանում լույս են տեսնում 29 անուն թերթեր (նախորդ տարի՝ 18) և 61 անուն ամսագրեր (նախորդ տարի՝ 52): Բայց սրանք վերջնական թվերը չեն, քանի որ օրեցօր ավելանում է դրանց քանակը, նոր թերթեր են լույս աշխարհ գալիս…[38]: Բացի այդ՝ 1990-ին «ի թիվս շատ իրողությունների հրաժեշտ տրվեց թերթի «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Պիոներ կանչ», «Կոմսոմոլեց» անվանումներին»: Ի վերջո, «Հայ մամուլը, գոնե հայաստանյան մամուլը նոր վերելքի մեջ է: Փաստորեն ամեն շաբաթ, եթե չասենք ամեն օր, մի պարբերականի ծնունդով է նշանավորվում: Օրինակ՝ 1990թ. հոկտեմբերի 1-ից սկսեց լույս տեսնել «Գեղարվեստը», 3-ից՝ «Գործարար աշխարհը», 9-ից՝ «ՀՀ-ն», 15-ից՝ «Հայկազունքը», 17-ից՝ «Ձայն օրինացը», 19-ից՝ «Արցախյան շաբաթն» ու «Արցախականչը», 24-ին՝ «Գոյամարտը», 26-ին՝ «Վարաժնունիքը»… Եվ այդպես վերջին երկու տարում՝ շուրջ 110 նոր պարբերական…

1990-ին գրաքննությունը շարունակում էր գործել, բայց նրա հսկողությունն այլևս ձևական բնույթ էր կրում[39]: ՀԽՍՀ ԳԽ մայիսի և տեղական խորհուրդների հոկտեմբերի ընտրություններում ՀՀՇ-ն և իր դաշնակիցները հաղթեցին, Սփյուռքից Հայաստան վերադարձան ավանդական երեք կուսակցությունները, որոնցից ՌԱԿ-ն ու ՀՅԴ-ն լրջորեն ձեռնամուխ եղան իրենց կազմակերպական կառույցի ստեղծման ու նոր տիպի մամուլի հրատարակության: ՀՅԴ-ն 1991-ի մարտի 8-ից հրատարակեց ազգային-հասարակական, քաղաքական «Ազատամարտ» թերթը, որի միջոցով, փաստորեն, 70 տարվա տարագրությունից հետո հայրենիքում իր ներկայությունը վերահաստատեց դաշնակցական մամուլը: 16 էջանոց (+ 8 էջ հավելված) թերթն աչքի էր ընկնում վերլուծական նյութերով, ամփոփումներով, լուսանկարների ու ընդհանրապես՝ ֆոտոռեպորտաժների առատությամբ: Մուշեղ Միքայելյանի խմբագրած թերթն առաջ էր տանում երկու ուղղություն՝ հայ Դատ, որն անշեղորեն կապում էր Դաշնակցության հետ և դարաբաղյան շարժում: Իսկ նույն թվականի օգոստոսի 27-ից լույս տեսավ ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի «Երկիր» պաշտոնաթերթը: Ղարաբաղի մասին լուրերը միշտ «Երկիր» թերթի առաջին էջում էին: Իր գործունեության հենց սկզբից «Երկիր» թերթի հրապարակումները առանձնացան պարզությամբ և անմիջականությամբ[40], ինչը նորություն էր հայաստանյան մամուլի համար: Ավելին՝ «Երկիր»-ը լրատվական բառարանը համալրեց նոր բառերով: Դրանցից ամենահայտնին ազատամարտիկն էր[41] (պայքարի ելած հայորդիներին թերթը ազատամարտիկ կոչեց):

ՀՌԱԿ-ը լույս ընծայեց «Ազգ» պաշտոնաթերթը (8 էջանոց, համակարգչային շարվածքով եռօրյա թերթի խմբագիրը Հակոբ Ավետիքյանն էր), որն իր գլխավոր խնդիրներից մեկը համարում էր հայոց պետականության ամրապնդումը և նրան սատար

կանգնելը[42]: Թերթն աչքի էր ընկնում նյութերի բազմազանությամբ, այն պատմում էր Արցախի մասին, տեղեկատվություն հաղորդում Սփյուռքից, ներկայացնում հայ գաղթօջախների կյանքը[43]: Հիմնականում հենց «Ազգ» թերթի գործունեությամբ դրվեց տեղեկատվական լրատվության սկիզբը: Ընթերցողական շուկան սկսեց հագենալ և, փաստորեն, ընթերցողն ընտրելու հնարավորություն ստացավ[44]:

Ազատ մամուլի տպարանային մեծաքանակ բազմացումն ու ազատ վաճառքը համանման պայմաններ ստեղծեցին պաշտոնական-կոմունիստական և ազատ-այլընտրանքային պարբերականների մրցակցության համար: Այդ մրցակցությունից հաղթական դուրս եկավ ազատ մամուլը: Աստիճանաբար փոխվեց գաղափարախոսությունը, և, բնական է, մամուլը նույնպես փորձեց դուրս գալ խորհրդային կոչվող կաղապարից:

1991թ.-ի հենց սկզբից մամուլը սկսեց աչքի ընկնել օպերատիվությամբ: Բացի այդ՝ մամուլում հայտնվեցին նաև քաղաքական բավական խորը վերլուծություններ, կոշտ տեսակետներ իրավիճակի մասին:

Չնայած մամուլի՝ խորհրդային կապանքներից ազատվելու փորձերին ու լրագրության դասական սկզբունքներին որոշակի առումներով մոտենալու ձգտումներին՝ խնդիրները շատ էին, պայմանները՝ ոչ բարենպաստ, քաղաքական իրավիճակը՝ անկայուն, լրագրողներն էլ՝ անպատրաստ: Այդուհանդերձ, մամուլն ու լրագրողները դժվարություններ էին հաղթահարում, լուծումներ որոնում ստեղծված իրավիճակում: Թեև անկախ այն բանից, թե հաղորդվող տեղեկատվությունն ընդգրկում է ավելի շատ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ տարրեր, միևնույն է այն հասարակական կարծիք է ձևավորում և հսկայական ազդեցություն ունի լսարանի վրա: Այդ առումով 1988թ. փետրվարի սկզբին ԼՂԻՄ-ի մասին հասարակական կարծիքի ձևավորման կառուցվածքը հիմնված էր 4 բաղկացուցիչների՝ ԼՂԻՄ-ի, Ադրբեջանի, ԽՍՀՄ-ի և այսպես կոչված «դրսի աշխարհի» զանգվածային լրատվամիջոցների վրա: Ընդ որում՝ ինքնավարության մասին նրա սահմաններից դուրս հասարակական կարծիքի ձևավորման առումով ԼՂԻՄ-ը հանդես էր գալիս իբրև լրատվության ազդեցության օբյեկտ, Ադրբեջանը՝ բացառապես լրատվության ազդեցության սուբյեկտ, այն դեպքում, երբ Խորհրդային Միությունը և «դրսի աշխարհը» միաժամանակ և՛ որպես լրատվության ազդեցության սուբյեկտ, և՛ որպես լրատվության ազդեõáõÃÛáõÃÛáõ օբյեկտ: Սակայն ԼՂԻՄ-ի մասին հասարակական կարծիքի ձևավորման կառույցում հենակետի գործառույթ իրականացնողը, այնուամենայնիվ, Ադրբեջանն էր: Նման իրավիճակը պետք է դիտել որպես հայկական ինքնավար կազմավորման լրատվական շրջափակում[45]՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում նրա գտնվելու տարիներին, շրջափակում, որն իր հերթին դարձավ իրական ինքնորոշման համար Լեռնային Ղարաբաղի ժողովրդին պայքարի հանած բազմաթիվ դրդապատճառներից մեկը: Իսկ խորհրդային ապատեղեկատվությունն էլ, փաստորեն, հանդիսացավ նախադրյալ ազատ մամուլի ստեղծման համար:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Винер Н. Человеческое использование человеческих существ: Кибернетика и общество, С.-Петербург, 2001., стр. 96
2. Брусницин Н. А. Информационная война и безопасность, М., 2001, с. 27-29.
3. Стрельцов А.А. Содержание понятия "обеспечение информационной безопасности", Информационное общество, 2001, вып. 4, с. 10-16.
4. [1] ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ: Հավելված ՀՀ Նախագահի 2009թ. հունիսի 26-ի ՆԿ-97-Ն կարգադրության:

5. “ Московские новости”, 1988г. N 14:
6. «Հայրենիքի ձայն», օգոստոսի 24, 1988թ., Եր.:
7. «Անկախություն», շ/թերթ, 7 մարտի, 1988թ., Եր.:
8. Նույն տեղում:
9. «Սովետական Ղարաբաղ», 15 մարտի, 1988թ., Ստեփ.:
10. «Անկախություն», շ/թերթ, 21 մարտի, 1988թ., Եր.:
11. Նույն տեղում:
12. Նույն տեղում: Արտատպությունը «Պրավդա»-ից, 4 ապրիլի, 1988թ., Մոսկվա:
13. «Կոմսոմոլեց», 13 հոկտեմբեր, էջ 2, 1988, Մոսկվա:
14. «Ոգնի», նոյեմբեր N 22, 1988թ., Եր.:
15. «ԵՊՀ-ն արցախյան գոյամարտում», Եր., 2011, էջ 80:
16. Նույն տեղում, էջ 85:
17. «Գրական թերթ», 17 հունիսի, 1988թ., Եր.:
18. «Անկախություն» շ/թերթ, 28 սեպտեմբերի, 1988թ., Եր.:
19. «Գարուն», N 6, N 12, 1988թ., Եր:
20. «Երեկոյան Երևան», 11 նոյեմբերի, 1988թ., Եր.:
21. «Երեկոյան Երևան» 28 օգոստոսի, 1989թ., Եր.:
22. «Երևանի համալսարան», 19 նոյեմբերի, 1988թ., Եր.:
23. Տես՝ Եազըճեան Գ., «Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը», Անթիլիաս 2004, էջ 72:
24. «Խորհրդային Հայաստան», 22 սեպտեմբերի, 1989թ., Եր.:
25. Նույն տեղում, 21 սեպտեմբերի, 1989թ., Եր.:
26. «Երեկոյան Երևան», 25 հունվարի, 1990թ., Եր.:
27. Նույն տեղում, 26 հունվարի, 1990թ., Եր.:
28. Նույն տեղում, 5 մարտի, 1990թ., Եր.:
29. «Մունետիկ», 27 մայիսի, 1990թ., Եր.:
30. Տես՝ Հայրապետյան Ն. «Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի 1987-1996թթ.», Եր., 1999, էջ 101:
31. «Մունետիկ», 8 հուլիսի, 1990թ., Եր.:
32. Նույն տեղում, 1 հուլիսի, 1990թ., Եր.:
33. «Երեկոյան Երևան», 28 օգոստոսի, 1990թ., Եր.:
34. «Խորհրդային Հայաստան», 25 օգոստոսի, 1990թ., Եր.:
35. «Հայաստան», 28 օգոստոսի, 1990թ., Եր.:
36. «Հայաստանի Հանրապետություն», 9 հոկտեմբերի, 1990թ., Եր.:
37. Նույն տեղում, 6 հունվարի, 1991թ., Եր.:
38. «Երեկոյան Երևան», 5 հոկտեմբերի, 1990թ., Եր.:
39. Հայրապետյան Ն. «Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի 1987-1996թթ.», Եր., 1999, էջ 102:
40. «Երկիր», 3 սեպտեմբերի, 1991թ., Եր.:
41. Նույն տեղում, 17 սեպտեմբերի, 1991թ., Եր.:
42. «Հայաստանի Հանրապետություն», 19 փետրվարի, 1991թ., Եր.:
43. «Ազգ», 23 փետրվարի, 1991թ., Երևան:
44. Հայրապետյան Ն. «Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի 1987-1996թթ.», Եր., 1999, էջ 12:
45. Տես՝ Ալ. Գրիգորյանի «Ղարաբաղյան հիմնահարցը՝ հակամարտող և 3-րդ կողմերի ԶԼՄ-ներում» գրքում հրապարակված գծապատկերը, Եր., 1999:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տեղեկատվական միջավայրի փոխակերպումները և հայաստանյան մամուլի հիմնախնդիրները՝ ղարաբաղյան շարժման համատեքստում (1988-1991թթ.)

Աննա Մկրտիչյան

Ղարաբաղյան շարժման տարիներին տեղեկատվության ձեռքբերման, առավել ևս տարածման ազատությունը խիստ սահմանափակված էր: Այդ անկայուն ժամանակաշրջանում մամուլն ի զորու չէր լիարժեքորեն իրականացնել իրեն վերապահված գործառույթները: 1988-1991թթ. հայաստանյան մամուլի հրապարակումների ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել այն բազմաթիվ մտահոգությունները, որոնք առկա էին տեղեկատվական միջավայրում և հենց մամուլի գործունեության մեջ՝ սկսած վստահության ճգնաժամի մթնոլորտի ձևավորումից մինչև տպագրական խնդիրներ, տարածման դժվարություններ: Այդուհանդերձ, մամուլն ու լրագրողները դժվարություններ էին հաղթահարում, լուծումներ որոնում ստեղծված իրավիճակում: Այդ ճանապարհը նաև նախադրյալ հանդիսացավ ազատ մամուլի ստեղծման համար:

РЕЗЮМЕ

Трансформация информационной среды и проблемы армянской прессы в контексте Карабахского движения (1988-1991)

Анна Мкртичян

Ключевые слова: информация, информационная безопасность, информационная среда, кризис доверия, армянская пресса, Карабахское движение, общественное мнение, советская дезинформация.

Во время Карабахского движения свобода доступа к информации и, более того, свобода распространения были строго ограничены. В течение этого нестабильного периода пресса не смогла полностью выполнить функции, которые она имела. 1988-1991гг. изучение публикации прессы в Армении позволяет нам выявить многие проблемы, которые существовали в информационной среде и в деятельности прессы – от формирования атмосферы кризиса доверия до проблемы печати и трудности распространения. Тем не менее, пресса и журналисты преодолевали трудности и находили решение я этой ситуации. Этот путь был предпосылкой для создания свободной прессы.

SUMMARY

The transformation of the information environment and the issues of the Armenian press in the context of the Karabakh movement (1988-1991)

Anna Mkrtichyan

Keywords: information, information security, information environment, confidence crisis, Armenian press, the Karabakh movement, public opinion, Soviet disinformation.

During the Karabakh Movement, the freedom of access to information and, moreover, freedom of distribution was strictly limited. During that unstable period, the press was unable to fully perform its functions. The study of the articles in the Armenian press from 1988 to 1991 allows us to present a number of issues existing in the information environment and in the media, from the formation of an atmosphere of confidence crisis to printing problems and difficulties of distribution. Nevertheless, press and reporters tried to overcome difficulties and look for solutions in the current situation. This road was also a prerequisite for the creation of free media.